ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Հ Ր Ա Մ Ա Ն

08 սեպտեմբեր 2021 թվականի N 152- Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի N 20-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության ղեկավարի 2021 թվականի փետրվարի 5-ի «Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության ղեկավարի, նրա տեղակալների և գլխավոր քարտուղարի միջև պետական վերահսկողական ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգումը վերապահելու և Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության ղեկավարի 2020 թվականի հոկտեմբերի 11-ի N 119 - Լ հրամանն ուժը

կորցրած ճանաչելու մասին» N 20-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) Հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետը լրացնել նոր՝ «դ» և «ե» պարբերություններով հետևյալ բովանդակությամբ.

«դ. տնտեսական ոլորտի վերահսկողության վարչություն,

ե. տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտների վերահսկողության վարչություն:»,

2) Հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ Տ. ՈՒԼԻԽԱՆՅԱՆ

08.09.2021

X

ՏԻԳՐԱՆ ՈՒԼԻԽԱՆՅԱՆ

Signed by: ULIKHANYAN TIGRAN 2812830492

Երևան